38 **Եւ**[1] արդ՝ որովհետեւ բովանդակեցաք զհասարակախաւսութիւնս, սկսանիմք պատմել զառանձնութիւն նոցա ըստ դրից Պապա[յ] Աղէքսանդրաց[ւ]ո[յ][2]՝ սկսեալ յԱրեւմտից յՈվկիանոսէ, յառաջին մասնէ երկայնութեան, ի Սպանիա[յ], ի Ծայրէն, որ կոչի Յեռ[ի]ոն[3], այսինքն՝ «Մեծ եւ հրաշալի». որ ծայրն ի ներքս գա[յ] ի յՈվկիանոս՝ առաւել քան զայլ երկիր, մասունս երիս կէս[4], որ լինի ասպարէզք հազար հինգ հարիւր յիսուն[5], որպէս եւ է իսկ ի ներքոյ ստորագրեալ:

1 [Գ.] [**Աշխարհ Եւրոպիա**][6]

2 Յաղագս Սպանիոյ[7]

3 **Ա.**[8] Առաջին բնաշխարհ Եւրոպիա[յ]՝ Սպանիա է. երեքանկիւնի ձեւով, կալով ի մէջ ծովուց՝ որպէս կղզի: 4 Սահմանի յարեւմտից Ովկիանոսիւ[9]՝ առեալ Յեռիոն[10] Ծայրէն, որ կա[յ] [յ]առաջին[11] մասին ՝երկայնութեան[12], [9բ] [յ]երեսուն եւ ութ[13] մասին լայնութեանն, մինչեւ ցմիւս Ծայրն, որ կոչի Նեռիոն, որ կա[յ] ի հինգ[14] մասին երկայնութեանն եւ քառասուն եւ վեց մասին լայնութեան[15]: 5 Իսկ յարեւելից սահմանի նոյնպէս Պեռինեա[յ] լերամբ՝ հարաւո[յ][16], իսկ ի հարաւո[յ] սահմանի Յունաց ծովուն՝ առեալ ի նոյն Պեռին[ե]ա[յ][17]: 6 Գետ ունի զԴուբաս եւ զՎիռիոս, բայց գրեմք միայն զգետս[18] անուանիս: 7 [**Բովանդակի ի նմա երիս[19] աշխարհս փոքունս[20], որք եւ[21] ունին [զ]գաւառս բազումս եւ զքաղաքս[22], զորս[23] անուամբ յիշատակել[24] աշխատութիւն անշահ համարեցաք**: 8 **Եւ ո՛չ միայն զգաւառս եւ զքաղաքս, այլ[25] խորհեցաք միայն գրել զլերինս անուանիս եւ զգետս հզաւրս**][26] եւ զքաղաքս հոյակապս՝ զանց արարեալ զաննշանաւքն [**եւ եթէ այլ ինչ նշանաւոր իցէ, թողլով ի բաց զթիւս եւ զմանրամասնաբար[27] պատմութիւնս**][28]:

---

1 *V-ում* Ե-*ն գլխատառով եւ կարմրով է*

2 *V* Աղէքսանդրացոյ *փխ* Աղէքսանդրացւոյ *(վեր. Սուքրեանի. հմմտ. նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

3 *VS* Յեռոն *փխ* Յեռ[ի]ոն *(վեր.՝ ըստ յաջորդի, տե՛ս նախ. Գ.4. հմմ՛* «Ἱερίων հրուանդան»*)*

4 *V* .գc., *S* երիս *փխ* երիս կէս *(վեր. ըստ Աբրահամեանի, 1940. իսկ ըստ Սուքրեանի վրիպեալ ծանթագրման՝* «Յօր. կայ առ *երիս* բառի՝ ձեւ մի իբրեւ C, որ թուի նշանակել տասներորդ մասին, այսինքն զաստիճանի. զի մասն ասաց 500 ասպարէզ լինել, եւ Գ մասունք լինին 1500. իսկ աստ աւելի կայ եւ 50 եւս, որ է 1/10 մասին»*)*

5 *V* ղշծ

6 *V չիք* Գ. Աշխարհ Եւրոպիա / *S* ԵՒՐՈՊԱՑ *փխ* Եւրոպիա *(պայմանական վերականգնում՝ հետեւելով Սուքրեանին, ըստ համառօտի (որն ունի՝* «Աստանաւր Աշխարհ Եւրոպիայ երկոտասան»*) եւ նախորդների ու յաջորդների. տե՛ս օր.՝ ստորեւ, նախ. Գ.74.* «Կատարեցաւ Եւրոպիա...»*)*

7 *S չիք* Յաղագս Սպանիոյ *(V. տողն առանձին է, կարմրով՝ հէնց իբրեւ խորագիր. Սուքրեանը լոկ մի նշում է արել, բայց, գուցէ, նման խորագրեր ունեցել են հեղինակի միւս գլուխները եւս, ինչպէս գտնում էր Երեմեանը. հմմտ. նախ. Ե.188 եւ 243)*

8 *S չիք* Ա. *(V. գրուած է լուսանցքում՝ այլոց պէս փոքրատառ, բայց պատուոյ նշանների մէջ՝ հէնց իբրեւ հատուածահամար. յաջորդող բառը, ինչպէս եւ ստորեւ ամենուր՝ կարմիր գլխատառով է)*

9 *V-ում այս* **ւ**-*ի վրայ ինչ-որ կայծակնաձեւ նշան կայ*

10 *S* յԵռիոն *փխ* Յեռիոն *(V. հմմտ. նախորդը՝ Բ.38)*

11 *V* առաջին *փխ* [յ]առաջին *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. ըստ Երեմեանի՝* «Աւելի ճիշտ՝ երկրորդ»*)*

12 *VS* յերկայնութեան *փխ* ՝երկայնութեան *(վեր. Երեմեանի ըստ այլոց, օր.՝ 2 տող յետոյ)*

13 *V* լը *փխ* յերեսուն եւ ութ *(վեր. Սուքրեանի)*

14 *V* ե

15 *S չիք* եւ քառասուն եւ վեց մասին լայնութեան *(V. թուանշանը՝* խզ*)*

16 *S չիք* հարաւո[յ] *(V)*

17 *V* Պեռինա, *S* Պեռինայ *փխ* Պեռին[ե]ա[յ] *(վեր.՝ ըստ նախորդ տողի)*

18 *Գրիչը կայծակնաձեւ նշանների մէջ է առել իր գրած* «զգետս միայն»*-ը, ուստի՝ պիտի վերականգնենք այլ հերթականութեամբ՝* միայն զգետս

19 *Dv* չորս *փխ* երիս *(AEPv²)*

20 *AE* Բաժանի նա փոքր աշխարհս երիս *փխ* Բովանդակի ի ... փոքունս *(DPv)*

21 *AE չիք* եւ *(DPv)*

22 *DPv* քաղաքս *փխ* զքաղաքս *(AE)*

23 *P* զոր *փխ* զորս *(ADEv)*

24 *DPv* յայտնել *փխ* յիշատակել *(AE)*

25 *DPv* այլ եւ *(AE)*

26 *VS չիք* Բովանդակի ... հզաւրս *(7 տող) (վեր.՝ ըստ համ., տե՛ս* **զգետս** անուանիս ... **զգետս** հզաւրս*)*

27 *E* բազմաբար *փխ* զմանրամասնաբար *(ADPv)*

28 *VS չիք* եւ եթէ այլ ... պատմութիւնս *(2 տող) (պայմանական վեր.՝ ըստ համառօտի)*